



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1576

1999

ՊԱՊ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆ

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄՕՆՍ ·
ՇԴՐՈՉՄԱՑԵՐԻ


Ի ՎԱՏԻԿԱՆԵԱՆ ԺՈՂՈՎՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ԶԵՆՈՒ ՄԸՍԸՐԼԵԱՆ



Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս





ՄԱՐԿԻՆԻ ԲԱՐՈՒՄ

ՄԵՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՒՄ
ԿԵՆՏՐՈՆԻ

ՏԻՐՈՒ ԵՄԵՆԻՆԻՆԻ



ՄԱՐԿԻՆԻ ԲԱՐՈՒՄ




ՄԱՐԿԻՆԻ ԲԱՐՈՒՄ



ՊԱՊ ԵՒ ԱԻԵՏԱՐԱՆ

~~ՄԱ~~
ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄՕՆՍ • ՇԴՐՈՉՄԱՅԵՐԻ
Ի ՎԱՏԻԿԱՆԵՍՆ ԺՈՂՈՎՆ



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ ԶԵՆՈՒ ՄԱՐԿԻՆԻ

1120



Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Ղ Ի Ս

1871



Ահա ճառ մը Վատիկանու ժողովքին մէջ խօսուած
Հռովմէական եպիսկոպոսէ մը , վեց եօթը հարիւր եպիս-
կոպոսաց առջեւ , որ Հռովմէական ուղղափառութեան
սիւն մ'ալ հաստատելու գումարուած էին :

Այսպիսի բանախօսութեան , յառաջաբան չի չի-
նուիր , այլ երբ Հայերէն կը թարգմանուի , այսչափը մի-
այն սլարտք կը համարինք զրուցելու Անոնց՝ որ Հայաս-
տանեայց հայրենի եկեղեցիէն հերձուեր զատուեր են ,
ընդունելով Հռովմէական եկեղեցւոյն նախանձայոյղ ուղ-
ղափառութիւնը , թէ՛ կարդացէք՝ իմացէք եւ մի՛ հա-
ւատաք թէ ձեր Լուսաւորիչը Հռովմ երթալով Սեղբես-
տրոսի Պապութիւնը ընդուներ է , վասն զի Սեղբեստրոսի
ժամանակ Պապութիւն չկայ եղեր . եւ զրուցողը մենք
չեմք այլ Հռովմայ եկեղեցւոյ եւ Վատիկանու ժողովքին
անդամ եպիսկոպոս մը որ դարձեալ ինք չէ խօսողը այլ
կը խօսեցընէ զԱւետարանը՝ զԳործք Առաքելոցը՝ զԱռա-
քելոց թուղթերը եւ Լատին եւ Յոյն եկեղեցեաց զՍ .
Հայրապետները :

Եւ Անոնց նաեւ՝ որ Հայաստանեայց հայրենի եկե-
ղեցիէն չեն զատուեր՝ իրենց Ս . Լուսաւորչայ եւ իրենց
ազգային կրօնքէն եւ աւանդութիւններուն մէկ բառէն
չեն անցեր , ամէն հալածանաց տարեր են եւ ամէն բան-
տարկութեանց եւ մոլար քարտղութեանց ուչ չեն դրեր ,

4 1576-60

ՀՏ. 1582

կ'ըսենք « Կարգացէք աս տետրակը՝ առէք այս զէնքը պաշտպանելու համար ձեր սուրբ եկեղեցին եւ կարկեցընելու համար թշնամի բերանները որ կարծեն սխալ եւ սուտ պատճառաբանութեամբ զձեզ եւ ձերինները հեռացընել ձեր միութենէն որ Քրիստոսի ընդհանուր եկեղեցւոյն անարատ եւ ամենամաքուր մասն է :

Այսչափը միայն մեր խղճմտանքը զմեզ կը յորդորէ պուցելու մեր Ազգին :

Ի Դիմաց հրատարակութեան

ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ



ՅԱՐԳՈՅԱՊԱՏԻԻ ՀՍՐԻ ԵՒ ԵՂԲԱՐՔ

Դողալով բայց ազատ և հանդարտ խղճիւ առաջի Աստուծոյ որ կեայ և զիս կը տեսնէ, կ'ըսկախմ խօսիլ ձեր մէջ 'ի վեհափառ ժողովիս :

Յորմէ հետէ հոս ձեզի հետ կը նստիմ, ուշի ուշով ունկնդիր եղայ կաճառիս մէջ եղած բանախօսութեանց յուսալով ջերմ ըղձիւք որ լուսոյ ճառագայթ մը իջնելով 'ի վերուստ, լուսաւորէ իմ մտացս աչքերը և թոյլ տայ ինձ կատարեալ ծանօթութեամբ իրին կշռել տիեզերական Սուրբ Ժողովոյս կանոնները :

Լաւ խելամուտ ըլլալով պատասխանատուութեան մասին, որուն հաշիւը Աստուած ինձմէ պիտի պահանջէ, լուրջ մտադրութեամբ մը ետևէ եղայ ուսնելու Հին և Նոր կտակարանները և հարցուցի ճշմարտութեան այս սուրբ յիշատակարանաց որ ճանչցունեն ինձի թէ սրբազան Քահանայապետը որ հոս նախագահ կը բազմի ճշմարտապէս յաջորդ է Ս. Պետրոսի, փոխանորդ Յիսուսի Քրիստոսի և անխալ վարդապետ եկեղեցւոյ :

Այս ծանր խնդիրը լուծելու համար հարկեցայ իրաց ներկայ վիճակը բոլորովին ջնջել աչքիս դիմացէն, և աւետարանական ջահը ձեռքս փոխադրուիլ մտօք այն ժամանակին յորում չկար ոչ ԱՆԴՐԱԼԵՌՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ոչ ՔԱՂՂԻԱԿԱՆՈՒ

ԹԻՒՆ , և յորում եկեղեցւոյ վարդապետներն էին Ս . Պօղոս , Ս . Պետրոս , Ս . Յակովբոս և Ս . Յովհաննէս , այնպիսի վարդապետներ , որոց չեմք կրնար զլանալ Աստուածային կարողութիւնը առայ երկբայութեան տակ ձգելու զայն ամենայն զոր մեզ կ'ուսուցանեն ՍՈՒՐԲ ԳԻՐՔ , որ հոս իմ դիմացս է և զոր Տրիտենդեան ժողովքը՝ քարոզած է իբր ԿԱՆՈՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ՍՈՂՈՐՈՒԹԻՅ :

Բացի ուրեմն այս սրբազան էջերը . . . և արդհամարձակիմ ըսելու , ես բան մը չգտայ որ ուղղակի կամ անուղղակի վաւերացունէ Անդրալեոնականաց կարծիքը :

Եւ մանաւանդ մեծաւ զարմացմամբ տեսայ որ , Առաքելոց օրերը և ոչ յիշատակութիւն մը կայ Պապի մը իբրև յաջորդ Ս . Պետրոսի և փոխանորդ Յիսուսի Քրիստոսի , ինչպէս Մահմետի որ տակաւին չէր եկած :

Դուք , Մանս . Մաննինկ , պիտի ըսէք որ ես կը հայհոյեմ , և դուք , Մոնս . Բիէօ , որ ես կը զառանցեմ . ոչ , ես չեմ հայհոյեր և ոչ ալ կը զառանցեմ , Տեարք իմ . այժմ առանց ամբողջ ալ կարդալու Նոր կտակարանը կը վկայեմ առաջի Աստուծոյ ձեռքս դէպ 'ի այս մեծ խաչելեալը երկընցունելով , որ հիմակուան Պապութեան ամենեւին հետք մը չգտայ :

Մի զլանաք ինձ , յարգոյապ , եղբարք իմ , ձեր մտադրութիւնը , և ձեր շնջմամբն ու ընդհատութեամբք մ' արդարացունէք զանոնք որ կ'ըսեն հայր Յակիմիթոսին հետ , թէ այս ժողովքը

ազատ չէ և թէ մեր քուէները առաջուց հրամայուած են : Ասանկով այս վեհափառ ժողովքը , որուն վրայ սեւեռեալ են բոլոր աշխարհի աչքերն , յետին ամօթալից անարգութեան մէջ կրնայ կշնալ : Եթէ իւր մեծութիւնը կ'ուզենք , ազատ ըլլանք :

Շնորհակալ եմ Մոնս . Տիւբանլուի որ գլխովը հաւանութեան նշան կուտայ . այդ բանը կը խըրախուսէ զիս և կը շարունակեմ :

Կարդալով ուրեմն սուրբ գրքերը այն ուշադրութեամբ որով կարողացոյց զիս Տէր , մէկ գըլուխ մ' ալ , մէկ տող մ' ալ չգտայ , յորում ֆրիստոս պատուիրած ըլլայ Ս . Պետրոսի ուսուցանել առաքեալները որ իւր պաշտօնակիցքն էին :

Եթէ Սիմօն որդի Յովնանու ըլլար նոյնը ինչ որ այսօր կը հաւատանք որ է մեր Ս . Պիոս Թ . զարմանք է թէ ինչպէս չէ ըսած անոնց , թէ երբ Հօրս ելլեմ , դուք ամէնքնիդ պիտի հնազանդիք Սիմօն Պետրոսի՝ ինչպէս ինձ կը հնազանդիք . ես զինքը երկրիս վերայ իմ փոխանորդս կը դնեմ :

Ոչ միայն Քրիստոս կը լռէ այս կիտիս վերայ , այլ և այնչափ քիչ կը խորհի եկեղեցւոյ գլուխ մը դնելու , որ երբ իւր առաքելոց աթոռներ կը խոտանայ՝ իսրայելի երկոտասան ազգերը դատելու համար (Մատթ . ԺԹ . 28 .) տասներկու աթոռ կը խոտանայ անոնց՝ իւրաքանչիւրին մէյ յմէկ հաստ , առանց ըսելու որ այս աթոռոց մէջ մին այսինքն Պետրոսինը միւսերէն աւելի բարձր պիտի ըլլայ : Ստուգիւ , եթէ ուզէր ասանկ ըլլալը , ըսած կ'ըլ-

լար . ուրեմն իւր լուսթեանէն ի՛նչ կը հետեւի : Տրամաբանութիւնը կը հետեցունէ , որ ֆրիստոս չուզէց զՍ . Պետրոս գլուխ կարգել առաքելական դպրոցին :

Երբ ֆրիստոս կը զրկէ առաքեալները աշխարհակալելու , ամէնուն հաւասարապէս կուտայ կապելոյ և արձակելոյ իշխանութիւնը , ամէնուն կը խոստանայ զ Հոգին Սուրբ : Ներեցէք որ դարձեալ կրկնեմ . եթէ ուզէր իրեն վոխանորդ կարգել զ Պետրոս , պէտք էր որ հրաման ալ տար իրեն՝ իւր հոգեւոր զինուորութիւնը սկսելու ատեն :

Ս . Գիրքը կ'ըսէ , որ ֆրիստոս կ'արդիւն Պետրոսի եւ անոր ընկերաց ԹԱԳԱՒՈՐԵԼ , ՏԻՐԱՊԵՏՅԵԼ ԵՒ ԻՇԵԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ հաւատացելոց վերայ , ինչպէս սովորութիւն է մարդկանց թաղաւորներուն : (Ղուկ . ԻԱ . 23 .) Եթէ Ս . Պետրոս Պապ ընտրուած ըլլար , Յիսուս ասանկ չէր խօսէր , որովհետեւ , ըստ մեր աւանդութեանցը , Պապութիւնը երկու սուր կը բռնէ ձեռքը ՚ի նշան իւր հոգեւոր և ժամանակաւոր իշխանութեան :

Իր մը սաստիկ զարմանք պատճառեց ինձի , եւ հաստատելով վերի ըսածներս , ըսի ինքնիրենս . եթէ Պետրոս Պապ ընտրեալ ըլլար , ներեալ էր իւր պաշտօնակցաց որ զրկեն զինքը Ս . Յովհաննու հետ ՚ի Սամարիա Աստուծոյ որդւոյն Աւետարանը քարոզելու համար : (Գործք . Ը . 14 .)

Ի՛նչ արդեօք կը մտածէիք , Յ . եղբարք իմ , եթէ այս վայրկեանս համարձակէինք ընտրել յառաքելութիւն մեր Ս . Պիոս Թ . Ը և զՄոնս . Բլան

դիէ երթալ կոստանդնուպոլսոյ Պատրիարքին եւ յորդորել զինքն որ դադրեցունէ Արեւելեան հերձուածը :

Բայց ահաւասիկ իր մ'ալ որ աւելի կարեւորութիւն ունի : Տիեզերական ժողովք մը գումարեցաւ յերուսաղէմ՝ այն խնդիրները որոշելու համար որոնք կը բաժնէին զհաւատացեալս : Եթէ Ս . Պետրոս Պապ ըլլար , ո՞վ գումարած կ'ըլլար այն ժողովքը . — Ս . Պետրոս : — Ո՞վ նախագահ կը բաղմէր յայնմ . — Ս . Պետրոս կամ իւր նուիրակները : — Ո՞վ կը հաւաքէր եւ կը հրատարակէր այն ժողովոյ կանոնները . — Ս . Պետրոս : Ուրեմն այս բաներէն եւ ոչ մին եղաւ : Առաքեալը ներկայ էր ժողովոյն , ինչպէս նաև բոլոր իր պաշտօնակիցներն ալ . ինքը չէր որ հաւաքեց այն ժողովքին վճիռներն , այլ Ս . Յակովբոս . և երբ հրովարտակները կը հրատարակուին՝ յանուն առաքելոց , երիցանց և եղբարց կը հրատարակուին : (Գործք . ԺԵ .)

Ասանկ կ'ընենք մենք ալ մեր եկեղեցւոյն մէջ : Որչափ աւելի իմ քննութեանցս խորը կը մտնեմ , Յ . եղբարք իմ , այնչափ աւելի կը համոզւիմ որ Ս . Գրոց մէջ չ'երևիր զլիաւորութիւն մը Յովնանու որդւոյն վրայ . արդ մինչ մենք կ'ուսուցանեմք որ եկեղեցին շինեալ է Ս . Պետրոսի վերայ , Ս . Պողոս , որուն հեղինակութիւնը աներկբայելի է , կ'ըսէ մեզ իւր Եփեսացւոց թղթոյն մէջ . (Բ . 20 .) “ շինեալ է ի վերայ հիման առաքելոց և մարդարէից , և ինքն Յիսուս ֆրիստոս է վէմ գլխոյ անկեան :

Եւ նոյն առաքեալը դարձեալ այնչափ քիչ կը հաւատայ Ս. Պետրոսի գլխաւորութեան վերայ, որ յայտնապէս կը պախարակէ զանոնք որ կ'ըսեն. « ես Պօղոսեան եմ. և միւսն եթէ ես ապաղոսեան, (Կորնթ. Ա. 12.) ինչպէս բնականաբար զանոնք ալ որ ըսելու ըլլային, թէ մեք Պետրոսեան եմք : Ուրեմն թէ որ Պետրոս առաքեալը ֆրիստոսի փոխանորդն ըլլար . Ս. Պօղոս պիտի ետ կենար ասանկ սաստիկ կշտամբելէ զանոնք որոնք իւր պաշտօնակցին յարեալ էին :

Նոյն առաքեալն Պօղոս թուելով Եկեղեցւոյն պաշտօնները, կը յիշէ առաքեալները, մարգարէները, աւետարանիչները, վարդապետներն և հու վիճակները :

Հաւատալի՞ բան է, Յ. եղբարք իմ, որ Ս. Պօղոս, մեծ վարդապետն ազգաց մոռցած ըլլար պաշտօններուն ամենէն առաջինը այսինքն ՊԱՊՈՒԹԻՒՆԸ, եթէ ՊԱՊՈՒԹԻՒՆԸ երկնային կարգաւորութիւն մը եղած ըլլար : Այս մոռացութիւնը ինծի կարելի բան չ'երևցաւ, ինչպէս կարելի չերևնար որ այս ժողովոյս պատմագիրը մոռացութեամբ խօսք մը անդամ չ'ընէ մեր Պիոս Թ. Սըբբազանին վրայ : (ՔԱՆԻ ՄԸ ՁԱՅՆԵՐ . ԼՈՒԷ, ՀԵՐԵՏԻԿՈՍ, ԼՈՒԷ :)

Հանդարտեցէք, Յ. եղբարք իմ, դեռ ամեն բան չ'ըսի, իմ շարունակելուս արդեւք ըլլալով նիդ պիտի ցուցանէք աշխարհի, որ պակասութեան մէջ կը դանուիք ժողովոյս ամենէն պզտիկ անդամին բերանը գոցելով : կը շարունակեմ :

Առաքեալն Պօղոս իր նամակաց ոմանց մէջ, զորոնք այլ և այլ եկեղեցեաց կ'ուղղէ, Պետրոսի գլխաւորութեան վրայ յիշատակութիւն չ'ըներ : Եթէ այս գլխաւորութիւնը գոյութիւն ունենար, եթէ, մէկ խօսքով, Եկեղեցին իւր ծոցին մէջ գերազոյն գլուխ մը ունենար անխալ 'ի վարդապետութեան, արդեօք ազգաց մեծ վարդապետը կը մոռնար անոր խօսքն ընելու : Ի՞նչ կ'ըսեմ : Երկայն նամակ մը գրած կ'ըլլար այս կարևոր և գլխաւոր նիւթոյս վրայօք : Երբ կը կանգնուի ֆրիստոնէական վարդապետութեան շէնքը, կրնայ մոռցուիլ անոր հիմունքը և կամարին միջնակապը, ինչպէս ինքը մոռցաւ : Հիմայ, որպէս զի առաքելական Եկեղեցին հերետիկոսական չդատուի, զոր չեմք ուզեր և ոչ ալ կ'իշխեմք ըսելու, ստիպեալ ենք միաբանիլ յայսմ թէ Եկեղեցին երբէք չեղաւ այնչափ գեղեցիկ, այնչափ անարատ և այնչափ սուրբ, որչափ այն օրերը յորս պապ չկար : (ՁԱՅՆԻ . ՍՈՒՏ Է, ՍՈՒՏ Է :)

Սուտ չէ, Մոնս . տը Լավալ . եթէ ձեր մէջէն մէկը յանդգնի մտածել, Յ. եղբարք, որ Եկեղեցին այսօր պապ մը ունենալով իրեն գլուխ՝ աւելի հաստատուն է 'ի հաւատոս և աւելի անարատ ԱՌԱՔԵՆԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ սովորութից մէջ, թող յայտնապէս զրուցէ յերէսս տիեզերաց . վաւրն զի այս տեղս կեդրոն է, ուսկից մեր խօսքերը կը թռչին մէկ բևեռէն մինչև 'ի միւսն : կը շարունակեմ : Ոչ Ս. Պօղոսի ոչ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՄ Ս. ՅԱԿՈՎԲԱՅ զրուածոց մէջ հետք կամ

սերմ մը կրցայ գտնել պապական իշխանութեան :
Ս . Ղուկաս , առաքելական գործոց պատմագիրը ,
այս գլխաւոր կիտիս վրայօք կը լռէ :

Ս . յս սուրբ մարգոց լուսթիւնը , որոնց գրք-
ուածքը աստուածային ներշնչմամբ եղած գրուա-
ծոց կանոնին մասերէն են , ծանր և անկարելի
բան մը երևցաւ ինծի , եթէ Պետրոս արդարև
պապ եղած ըլլար . ինչպէս արդարացի չէր ըլ-
լար Թիէրի լուսթիւնը , եթէ Նաբոլէոն Պոնաբար-
թին պատմութեանը մէջ զանց ընէր կայսր տիտ-
ղոսը :

Կը տեսնեմ իմ առջեւ ժողովոյս անդամներէն
մէկը որ մատնանիչ կը զուրցէ . ահա հերձուածող
եպիսկոպոս մը որ սուտ անուամբ մեր մէջը մտած
է :

Ոչ , ոչ , Յ . եղբարք իմ , ես այս սրբազան ժո-
ղովոյս մէջ գողի մը պէս պատուհանէն մտած չ'եմ
այլ ձեզի պէս դռնէն . իմ եպիսկոպոսական տիտ-
ղոսս կուտար ինծի ներս մտնելու իրաւունքը ,
ինչպէս նաեւ իմ քրիստոնէական խիղճս կը
պատուիրէ ինձ խօսել և զրուցել զայն ամենայն
որուն ճշմարտութեանը վրայ չեմ տարակուսիր :

Ս . յն բանը որ ամենէն աւելի չ բացատրուելու
կերպով մը զարհուրեցոյց զիս՝ Ս . Պետրոսի լուսթիւնն
է : Եթէ առաքելալը ըլլար այն՝ ինչ որ մենք բարձ-
րաձայն կը քարոզենք թէ է , այսինքն Յ . Քրիստոսի
փոխանորդ երկրիս վրայ , ինքը պէտք էր գիտնալ
զայն թէ որ գիտնար զայն , դոնէ անգամ մը , ան-
գամ մը միայն Պապի պէս չէր գործէր : Պենտա-

կոստէի օրը կրնար զայն ընել , երբ իւր առաջին
ատենաբանութիւնը արտասանեց , բայց չ'ըրաւ
անանկ բան մը . երուսաղեմի ժողովքին մէջ , հոն
ալ չ'ըրաւ . Մնտիօքեայ մէջ , հոն ալ չ'ըրաւ . առ-
եկեղեցին ուղղեալ երկու նամակաց մէջ , գարձ-
եալ չ'ըրաւ . երևակայեցէք ասանկ պապ մը , Յ .
եղբարք , եթէ արդարև Ս . Պետրոս պապ մը ե-
ղած ըլլար :

Ուրեմն եթէ կուզենք պնդել որ ինքը պապ
եղած է , կը ծնանի բնական հետևութիւն մը զոր
պէտք է նոյնպէս պաշտպանել , այսինքն իւր պապ
ըլլալուն վրայօք իրեն անգիտութիւնը . հիմայ
կը հարցունեմ ով որ գլուխ ունի և կը մտածէ և
միտք խորհրդածելու . կարելի՞ են այս երկու են-
թադրութիւնները :

Դարձեալ կ'ըսեմ . Քանի որ կ'ապրէին առաք-
եալները , եկեղեցին երբէք չմտածեց որ պապ մը
կրնայ ըլլալ . ասոր հակառակը պնդելու համար
պէտք է կրակի տալ բոլոր սուրբ գրութիւնները և
կամ բոլորովին ուրանալ զանոնք :

Կը լսեմ որ յամենուստ կ'ըսեն . Միթէ Ս . Պետ-
րոս Հռոմ չկեցա՞ւ : Միթէ գլխիվայր չխաչուեցա՞ւ :
Ս . յն աթոռը (1) որուն վրայէն կը քարոզէր և այն

(1) Ծան . Թարգմ : Լսածնուս համեմատ Ս . Պետրո-
սի անունով աթոռ մը դարերէ 'ի վեր կը պահուի Հռոմի
մեծ եկեղեցւոյն մէջ ամպհովանիներու և ծածկոցներու
տակ , եւ զոր կը հանեն Պիոս Թ . ի 23 տարւոյն Յոբել-
եանին օրը եւ զինքը փառաւորապէս վրան կը նստեցու-
նեն : Արաբերէն զխոցող մը մօտենալով աթոռին կը տես-
նէ վրան գրուած « լա ի լա իննալլահ Մուհամմէտ բէ-
աուլլահ » :

սեղանը որուն վրայ կը պատարագէր միթէ այս յաւիտենական քաղքիս մէջ չե՞ն :

Սրբոյն Պետրոսի ՚ի Հռոմ բնակիլը Յ. եղբարք, աւանդութենէ զատ ուրիշ ապացոյց մը չունի . բայց եթէ ինքը Հռովմայ եպիսկոպոս ալ եղած ըլլայ, իւր այս քաղքիս եպիսկոպոս ըլլալէն կարելի է հետեցունել և հաստատել իր գլխաւորութիւնը : Առաջին կարգի ուսումնական մը, Աքալիճէր, չ'երկբայեցաւ ըսելու, որ Ս. Պետրոսի եպիսկոպոսութիւնը ու Հռոմ բնակիլը ծիծաղելի առասպելաց կարգը կրնան համարուիլ : (Ա. ՂԱՂԱԿՆԵՐ . ԽՕՍԲԸ ԿՏՐԵՑԷ՛Ք, ԸՆԴՀԱՏԵՑԷ՛Ք ԽՕՍԲԸ, ԹՈՂ ԻՋՆԱՅ ԲԵՄԷՆ) :

Յ. եղբարք իմ, պատրաստ եմ ըսելու, բայց աւելի պատշաճ չէ ասանկ ժողովքի մը մէջ, ինչպէս է մերինը, քննել զամենայն ինչ, ինչպէս առաքեալը կը պատուիրէ, և հաւատալ այն բանին որ բարի է : Բայց, Յ. եղբարք իմ, մենք իշխանապետ մը ունինք, որուն առջև ամէնքնիս նաև ինքը Ս. Պիոս Թ. պարտաւոր եմք երկրպագել, ըսել և գլուխնիս խոնարհեցունել : Այս իշխանապետը պատմութիւնն է :

Պատմութիւնը առասպել չէ, որ ինչպէս բըրուտը կաւը կը գործածէ և կը փոփոխէ, անանկ փոփոխուի . ադամանդ է անիկայ որ ապակւոյն վրայ անջնջելի խօսքեր կը քանդակէ : Մինչև հիմայ անոր կրթնած եմ, և եթէ առաքելոց օրերը պատմութեան հետք չդտայ, յանցանքն իմն չէ այլ իրեն : Կողմէք ուրեմն սխալ ին յանցանայն համար

չիս ամբաստանել : Ազատ էք ընելու :

Աջ կողմէս այս խօսքերը ականջս կուգան . ԴՈՒ ԵՍ ՊԵՏՐՈՍ (ըստ լատինական թարգմ.) ԵՆ Ի ՎԵՐԱՅ ԱՅԴԻ ՎԻՄԻ ՇԻՆԵՑԻՑ ԶԵԿԵՂԵՑԻ ԻՄ : (Մատթէ . ԺՁ .)

Քիչ մը ետքը, Յ. եղբարք իմ, այս նիւթոյս կը պատասխանեմ . բայց անկէ առաջ պէտք է որ իմ պատմական խուզարկութեանցս եզրակացութիւնն ընեմ ձեզ :

Կը յուսամ որ ձեզմէ ոչ ոք պիտի ուզէ երկբայիլ իպպոնայի Սուրբ եպիսկոպոսին մեծին և երանելոյն Օգոստինոսի հեղինակութեանը վրայ : Այս աստուածապաշտ վարդապետը Գաթոլիք եկեղեցւոյ փառքն ու պատիւը, քարտուղար էր Մէլիփետանեան (1) ժողովքին մէջ : Սոյն նուիրական ժողովքին վճռոց մէջ կը կարդացուին այս նշանաւոր խօսքերը . ՈՎ ՈՐ ԾՈՎԷՆ ԱՆԴԻՆ (2) ՈՒ ԶԵՆԱՅ ԲՈՂՈՔԵԼ, ԱՓՐԻԿԷԻ ՄԷՋ ՄԷԿԷ ՄԸ ԶՐԵՆՈՒՆՈՒԻ Ի ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ :

Ափրիկէի եպիսկոպոսները այնչափ քիչ կը ճանչնային Հռովմայ եպիսկոպոսին գլխաւորութիւնը, որ բանադրանօք կը պատժէին զանոնք որոնք առ նա բողոքելու համարձակէին :

Սոյն այս եպիսկոպոսները կարքեղոնի վեցերորդ ժողովոյն մէջ զոր գումարեց Աւրելիոս նոյն քաղքին եպիսկոպոսը, գրեցին Հռովմայ կելեսափինոս եպիսկոպոսին, պատուիրելով իրեն, որ

(1) Ափրիկէի մէջ :
(2) Այսինքն ՚ի Հռովմ :

Ափրիկէի եպիսկոպոսաց , քահանայից և կղերիկոսաց բողոքները չ'ընդունի . այլ ևս նուիրակներ ու գործակալներ չ'ղրկէ , և միանգամայն մարդկային ամբարտաւանութիւնը եկեղեցւոյ մէջ չ'ըտցունէ :

Հռովմայ պատրիարքին առջի ժամանակներէ 'ի վեր բոլոր հեղինակութիւնը իրեն քաշել ուզելը բացայայտ իրականութիւն մ'է . բայց աս ալ աներկբայ իրականութիւն մ'է միանգամայն , որ ինքը գլխաւորութիւն չունէր , զոր անդրալեռնեայք իրեն կը սեփականեն . եթէ ունեցած ըլլար զայդ , Ափրիկէի եպիսկոպոսունք և ամենէն առաջ Ս . Օգոստինոս կրնային իշխել իրենց վրճիւններովը արգելուլ առ նորա գերագոյն ատեանը բողոքելու :

Առաքելոց օրերը պապութեան հետք չգտնելով , ըսի ինքնիրենս . փնտռածս կրնամ գտնել եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ : Հիմայ ուրեմն համարձակ ըսեմ . մէկ պապ մը միայն փնտռեցի առջի չորս դարուց մէջ և չկրցայ գտնել :

Առանց դժուարութեան կը խոստովանիմ , որ Հռովմայ պատրիարքութիւնը առաջին աթոռն ունէր , Յուստինիանոսի մէկ օրէնքը կ'ըսէ . “ ըստ չորս ժողովոց որոշմանցը կը պատուիրեմք որ նախնոյն Հռովմայ Ս . Պապը եպիսկոպոսաց առաջինը համարուի , և բարձր . արքեպիսկոպոսն կոստանդնուպոլսոյ , որ է նոր Հռովմ , երկրորդ համարուի ” :

Հիմայ պիտի ըսէք ինձի որ ուրեմն խոնարհէ Պապին գլխաւորութեան դիմաց :

Սյնքան դիւրահաւան մ'ըլլաք այս ապացուցիս , Յ . եղբարք իմ , վասն զի Յուստինիանու օրինաց ճակատը գրած է “ ԶԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԵՆԷ ԱԹՈՒՈՅ ՊԱՏՐԻԱՐԷԱՅ ” : Ուրեմն ուրիշ բան է գլխաւորութիւն , ուրիշ բան իշխանութիւն իրաւասութեան . այսպէս օրինակի համար ենթադրենք որ Ֆիորէնցայի մէջ բոլոր տէրութեան եպիսկոպոսաց ժողովք մը ըլլայ . հարկաւ առաջ նութիւնը պիտի տրուի Ֆիորէնցայի նախագահին , ինչպէս առ Արեւելեայս տրուած է կոստանդնուպոլսոյ պատրիարքին եւ յԱնդղիա Քէնդրպրի արքեպիսկոպոսին : Բայց ոչ առաջինը , ոչ երկրորդը կրնան մակաբերել իրենց սեփական աթոռէն դուրս աւելի իրաւասութիւն մը իրենց պաշտօնակցաց վերայ :

Հռովմայ եպիսկոպոսաց առաւելութիւնը կրնայ յառաջ գալ ոչ թէ աստուածային իշխանութենէ մը , այլ այն քաղքին փառաւորութենէն յորում իրենց աթոռը ունէին : Մոնս . Տարպուա պատուով վերագոյն չէ քան զԱւինիոնի արքեպիսկոպոսը . այսու ամենայնիւ փարիզ իրեն առաւելութիւն մը կուտայ , զոր չէր ունենար , եթէ իւր պալատը փոխանակ Սէնի եղերաց վրայ ըլլալու ըլլար Հռոգանոսի վրայ : Սյն բանը որ ճշմարիտ է կրօնական դասակարգութեան մէջ , ճշմարիտ է նաև քաղաքականին և քաղաքավարականին մէջ . Ֆիորենցայի քաղաքապետը Բիզայի ալ քաղաքապետ չէ , այլ քաղաքականապէս և քաղաքավարապէս մեծագոյն առաւելութիւն մը ունի :

1120.

Ըսի որ Հռովմայ պատրիարքը առջի դարերէն ՚ի վեր հետամուտ եղաւ եկեղեցւոյ տիեզերական կառավարութեան : Դժբաղդաբար շատ մօտ ալ հասաւ այն բանին . բայց ստուգիւ ան ատեն չունէր զայն , որովհետեւ ընդդէմ իւր պահանջմանցը Թէոդոս Բ . կայսրը օրէնք մը հանեց որով կը հաստատէր որ կոստանդնուպօլսոյ պատրիարքը նոյն իշխանութիւնը ունի ինչ որ Հռովմայ պատրիարքը :

Քաղկեդոնի ժողովոյն հայրերը հնոյն և նորոյն Հռովմայ եպիսկոպոսը մի և նոյն կարգը դասեցին ամեն նաև եկեղեցական բաներու մէջ : (Կան . 28 .)

Կարքեղոնի վեցերորդ ժողովը արգելեց բոլոր եպիսկոպոսաց , գլխաւոր կամ ինքնագլուխ եպիսկոպոս տիտղոսը :

Գալով ընդհանուր եպիսկոպոս տիտղոսին , զոր վերջերը պապերն առին , Ս . Գրիգոր Ս . հաւատարով որ իւր յաջորդները երբէք պիտի չյանգըգնին կապտել այդ տիտղոսը , գրեց այս նշանաւոր խօսքերը . “ ոչ ոք իմ նախորդներէս հաճեցաւ այս պիղծ անունը կրել . որովհետեւ երբ պատրիարք մը իր անձին ընդհանուր անունը կուտայ , պատրիարքութեան տիտղոսը անուանարկութիւն մը կը կրէ : Հեռու ուրեմն քրիստոնեայէ մը տիտղոս կրելու փափաքը որ զինքը վատահամբաւ կ'ընէ իւր եղբարց մէջ : ”

Ս . Գրիգորի խօսքերն իւր կոստանդնուպօլսոյ պաշտօնակցին ուղղեալ են , որ կը հետամտէր ե-

կեղեցւոյ նախագահութեան : Պեղագիտս Բ . պապը ԱՄՊԱՐԻՇՏ և ՊԻՂԾ կանուանէ զՅովհաննէս Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսը , որ կը ջանար ձեռք բերել ծայրագոյն քահանայապետութիւնը : “ հոգմ ” ընէք , կ'ըսէ , ԸՆԻՀԱՆՈՒՐ տիտղոսին վրայօք , որ Յովհաննէս բռնաբարեց ապօրինաւորապէս : պատրիարքներէն և ոչ մին առնու այս պիղծ տիտղոսը . որովհետեւ որպիսի՞ չարեաց պէտք չէ սպասենք , եթէ քահանայից մէջէն կ'ելլեն այսպիսի տարերք : Ուրեմն կ'ստուգուի նախագուշակեալն : — Հպարտութեան սրդւոց թագաւորն է : ” Պեղագիտս Բ . Նամ . 13)

Այս և ասոնց նման ուրիշ հաւասարազօր հարիւրաւոր իշխանութիւններ չէ՞ն ապացուցաներ կէսօրուան արևուն լուսոյն պայծառութեան պէս որ Հռովմայ առաջին եպիսկոպոսները շատ ուշ ճանչցուեցան իբրև ԸՆԻՀԱՆՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ և ԳԼՈՒԽ ԵԿԵՂԵՑՈՅ : Եւ ուրիշ կողմանէ ալ , ո՞վ չգիտեր թէ ինչպէս 325 էն , յորում դումարեցաւ առաջին ժողովն Նիկիոյ , մինչև 380 յորում եղաւ երկրորդ տիեզերական ժողովն կոստանդնուպօլսոյ , 19 արևմտեան եպիսկոպոս միայն ներկայ գտնուեցան 1109 եպիսկոպոսներէն որոնք առջի վեց ընդհանուր ժողովոց ներկայ գտնուած էին :

Ո՞վ չգիտեր որ կայսրները դումարած էին ժողովքները առանց իմացունելու և երբեմն ընդդէմ կամաց իսկ Հռովմայ եպիսկոպոսին : Ի՞նչպէս Ոսիոս Քորտուպայի եպիսկոպոսը նախագահ բազմեցաւ Նիկիոյ առաջին ժողովքին մէջ և անոր վը-

ճիւնները ձևացուց : Նոյն Ոսիոսը ետքը նախագահ
 նստաւ Սարգիկէի ժողովքին մէջ մերժելով Հռովմայ
 Յուլիոս եպիսկոպոսին նուիրակները : Այլ ևս
 չեմ պնդեր , Յ . եղբարք իմ , և կ'սկսիմ խօսելու
 ձեր այն մեծ վաստին վրայօք զոր առաջի կը դը-
 նէք Հռովմայ եպիսկոպոսին ԳԼԽԱԻՌՈՒԹԻՒՆԸ հաս-
 տատելու համար :

ՎԵՄԸ յորոյ վերայ շինեալ է Ս . Եկեղեցին ,
 դուք կ'իմանաք ՊԵՏՐՈՍ : Եթէ ուղիղ է վէճը կը
 լիննայ . բայց մեր նախնիքը մեզի պէս չէին մը-
 տածէր և ստուգիւ բան մը դիտէին :

Ս . կիւրեղ իր Երրորդութեան չորրորդ գրքին
 մէջ կ'ըսէ . ԵՍ ԿԸ ՀԱՒԱՏԱՄ որ ԶՎԵՄԸ իմանալու է
 առաքելոյն անշարժ հաւատքը : Ս . Իլարիոս Բուա-
 դիէի եպիսկոպոսը իր Երրորդութեան Բ . գրքին
 մէջ կ'ըսէ . ՎԵՄՆ (petra) է երջանիկ և միակ ՎԵՄՆ
 հաւատոյ վկայեալ 'ի բերանոյ Ս . ՊԵՏՐՈՍԻ . և այս
 վկայեալ ՎԻՄԻՆ վրայ , կ'ըսէ Երրորդութեան վե-
 ցեբորդ գրքին մէջ , այս ՎԻՄԻՆ վրայ և այս ՎԻ-
 ՄԷՆ ՊԵՏՐՈՍ անուանեցաւ առաքեալը : Իրմէ ետ-
 քը Ս . Յովհան Ոսկեբերան կ'ըսէ Մատթէոսի 33
 ճառին մէջ . այս ՎԻՄԻՍ վրայ պիտի շինեմ իմ ե-
 կեղեցիս , այսինքն : 'ի վերայ հաւատոյ վկայու-
 թեան . ուրեմն ո՞րն էր առաքելոյն վկայութիւնը :

Ահաւասիկ . ԴՈՒ ԵՍ ՔՐԻՍՏՈՍՆ ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ
 ԿԵՆՒԱՆԻՈՅ :

Ս . Ամբրոսիոս , Միլանու եպիսկոպոսը եփե-
 սացուոյ երկրորդ գլխոյն մէջ , Ս . Բարսեղ Սելե-
 կիացին և հարք ժողովոյն Բաղկեդոնի ճշդիւ նոյն
 բանը կը քարոզեն :

Հին քրիստոնէութեան վարդապետաց առաջիններէն
 մէկն է Ս . Օգոստինոս իր գիտութեան և սրբութեանը համար : Ուրեմն մտիկ բրէք իր
 գրածը Ս . Յովհաննու առաջին նաճակին երկրորդ
 ճառին մէջ : Ի՞նչ կուզեն ըսել այն խօսքերը . 'ի
 ՎԵՐԱՅ ԱՅՍՐ ՎԻՄԻ ՇԻՆԵՑԻՑ ԶԵԿԵՂԵՑԻ ԻՄ : Այն
 հաւատքին վրայ , անոր վրայ որ ըսուեցաւ . դու
 ես քրիստոսն որդի Աստուծոյ կենդանուոյ :

Իր Ս . Յովհաննու 124 ճառին մէջ կը գրու-
 նեմք այս նշանաւոր խօսքն ալ ԱՅՍ ՎԻՄԻՍ ՎԵՐԱՅ
 ԶՈՐ ԴՈՒ ՎԿԱՅԵՑԻՐ ՊԻՏԻ ՇԻՆԵՄ ԻՄ ԵԿԵՂԵՑԻՍ , ՈՐ
 ԲՈՎՀԵՏԵԻ ՔՐԻՍՏՈՍՆ ԷՐ ՎԵՄԸ :

Այս մեծ եպիսկոպոսը այնչափ քիչ կը հաւատար
 եկեղեցւոյն Ս . Պետրոսի վրայ շինեալ ըլլալուն .
 որ կ'ըսէր իւր հաւատացելոց իր 13 քարոզին մէջ :
 « Դու ես ՊԵՏՐՈՍ եւ այս ՎԻՄԻՍ ՎԵՐԱՅ որում դու
 վկայեցիր , այս ՎԻՄԻՍ ՎԵՐԱՅ զոր դու ճանչցար
 ըսելով — Դու ես քրիստոսն որդի Աստուծոյ կեն-
 դանուոյ — ՊԻՏԻ ՇԻՆԵՄ ԻՄ ԵԿԵՂԵՑԻՍ ԻՄ ՎԵՐԱՍ , ՈՐ
 ԵՄ ԿԵՆՒԱՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ . ԻՄ ԵԿԵՂԵՑԻՍ ՊԻՏԻ
 ՇԻՆԵՄ ԻՄ ՎԵՐԱՍ ԵՒ ՈՉ ԹԷ ԶԻՍ ՔՈՒ ՎԵՐԱՎ : »

Այս հռչակաւոր խօսքին վրայ ինչ կերպով որ
 կը մտածէր Ս . Օգոստինոս , բոլոր իւր ժամանա-
 կին քրիստոնէութեան կարծիքն ալ ան էր : Ուրե-
 մն կրկնութեամբ կը հաստատեմ :

Ս . Թէ Յիսուս մի և նոյն իշխանութիւնը տը-
 ւաւ առաքելոց ինչ որ Ս . Պետրոսի .

Բ . Թէ երբէք առաքեալները չճանչցան զՍ .
 Պետրոս իբրև փոխանորդ Յ . Քրիստոսի և ան-

սխալ վարդապետ եկեղեցւոյ :

Գ. Թէ Ս. Պետրոս երբէք չմտածեց թէ ինքը պապ է և ոչ երբէք պապութիւն ըրաւ :

Դ. Թէ առջի չորս դարուց ժողովքները, մինչ կը ճանչնային այն գերադոյն գահը զոր Հռոմովմայ եպիսկոպոսը կը գրաւէր եկեղեցւոյ մէջ 'ի սրտածառս քաղաքին. Հռոմովմայ, անոր ուրիշ բան չտուին բայց եթէ պատուոյ առաւելութիւն մը և ոչ թէ իշխանութիւն կամ իրաւասութիւն մը :

Ե. Թէ սուրբ հայրապետք այն համբաւաւոր խօսքին համար թէ ԻՌԻ ԵՍ ՊԵՏՐՈՍ ԵՒ Ի ՎԵՐԱՅ ԱՅՏԻՐ ՎԻՄԻ ԵՒ ԵՅԵՏԻՑ ԶԵԿԵՂԵՏԻ ԻՄ այնպէս չիմացան որ եկեղեցին շինուած ըլլայ Պետրոսի վրայ (Super Petrum), այլ վիմին վրայ (super petram) այսինքն առաքելոյն վկայութեան հաւատքին վրայ :

Յաղթանակաւ կ'ապացուցանեմ խօսքս պատմութեամբ, արդարութեամբ, արամբանութեամբ, խոհականութեամբ և քրիստոնէական խղճիւ, որ Յ. Գրիստոս գլխաւորութիւն մը չընտրէր Ս. Պետրոսի, և Հռոմովմայ եպիսկոպոսները ուրիշ կերպով չեղան թագաւորք եկեղեցւոյ՝ եթէ ոչ մէկիկ մէկիկ գրաւելով բոլորեպիսկոպոսութեան իրաւունքները: (ԶԱՅՆՔ, ԼՌԷ, ԱՆԵՐԵՍ ԲՈՂՈՔԱԿԱՆ, ԼՌԷ.)

Ես աներես բողոքական . . . Ո՛չ, հազար անգամ ո՛չ :

Պատմութիւնը ոչ կաթոլիկ է ոչ անգղիական ոչ կալվինական ոչ լուտերական ոչ հայ-

կական ոչ հերձեալ յունական և ոչ անդրալեւնական, այլ է՝ ինչ որ է. այսինքն հաւատոյ, կանոնաց և տիեզերական ժողովոց բոլոր վկայութիւններէն աւելի զօրաւոր բան մը :

Վրիպեալ համարեցէք զինքը եթէ կրնաք, բայց փճացունել զինքը չէք կրնար, ինչպէս աղիւս մը հանելով ֆոլիզէէն զինքը կործանել չէք կրնար : Թէ որ ըսի բան մը որուն հակառակը ցուցունէ պատմութիւնը, պատմութեամբ ինծի ճանչցուցէք, և առանց վայրկեան մը դանդաղելու հրապարակական թողութիւն մը խնդրեմ. բայց համբերող եղիք և կը տեսնէք որ դեռ ամեն բան չ'ըսի ինչ որ պէտք էր ըսել և ինչ որ կուզէի. մինչև խարոյկն անդամ սպասէ ինծի Ս. Պետրոսի հրապարակին մէջտեղ, պէտք չէ որ լռեմ և ինծի պարտք է շարունակել :

Մոնս. Տիւբանլու իւր համբաւաւոր ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆՑ մէջ այս վատիկանեան ժողովոյն վրայ, զուրցած է և իրաւամբ, որ եթէ մենք անսխալ հրատարակենք զՊիոս Թ. 'ի հարկէ և բնական տրամաբանութեամբ պիտի ստիպուինք նաև անսխալ ճանչնալ բոլոր իւր նախորդները : Արդ ահաւասիկ, Յ. եղբարք իմ, պատմութիւնը իւր իշխանական ձայնը կը բարձրացունէ զձեզ աներկբայ ընելու համար որ քանի մը պապեր սխալեցան, դուք բողոքեցէք և ժխտեցէք. ես պատմութեամբ կը խօսիմ :

Վիկտոր պապը (192) հաստատեց Մոնտանեան աղանդը, ետքը դատապարտեց զայն :

Մարկել Լինոս (296, 303) կռապաշտ եղաւ, վեասայի տաճարը մտաւ և խուճկ մատոյց դիցուհւոյն: Դուք պիտի ըսէք որ տկար գտնուեցաւ, բայց ես պիտի պատասխանեմ. Յիսուսի ֆրիստոսի փոխանորդ մը կը մեռնի, բայց չուրանար:

Լիբերիոս (358) ընդունեցաւ Անաստասայ դատապարտութիւնը և խոստովանեցաւ Արիոսականութիւնը արքայանքէն ետ կանչուելու և նորէն իր գահին վրայ հաստատուելու համար:

Ոնորիոս (625) միակամադաւանաց կողմը միտեցաւ. հայրն կրադրի բացայայտ ապացուցած է զայն:

Գրիգոր Ա. (578—90) Նեո կ'անուանէ զանիկայ որ ԸՆԳԶԱՆՈՒԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ անունը առնու, և ընդհակառակն Պոնտիփակիոս Գ. (607—8) կ'առնու այս տիտղոսը փոկաս հայրասպան կայսերէն:

Յարութիւն Բ. (1088—1099) և Եւգինէոս Գ. (1145—1153) կը անօրինէն մենամարտութիւնը, Յուլիոս Բ. (1509) եւ Պիոս Գ. (1560) կ'արգիւնեն զայն:

Եւգինէոս Գ. (1431—39) Պաղիլէայի ժողովքը ևւ Պոհեմիոյ եկեղեցեաց մէջ բաժակին վերադարձը կը հաստատէ. (Երկու տեսակաւ հաղորդուիլ.) և նոյնը յետո կը կոչէ Պիոս Բ. (1658):

Ադրիանոս Բ. (867—872) քաղաքական ամուսնութեան վավեր ըլլալը կը յայտնէ: Պիոս Է. (1800—23) կը դատապարտէ զայն: Քսենտոս Ե. (1585—1590) կը հրատարակէ Ս. Գրոց տրպագրութիւն մը և կոնդակաւ մը կը յանձնէ ընթեր-

նուլ զայն. Պիոս Է. կ'արգելու անոր ընթերցումը:

Կղեմէս Ժ.Գ. (1773) կը քակտէ Յիսուսեանց կարգը զոր հաստատեր էր Պողոս Գ: Պիոս Է. վերստին կը հաստատէ զայն:

Բայց ինչո՞ւ ատանկ հեռաւոր ապացոյցներ կը փնտռենք: Մեր Ս. Հայրը Պիոս Թ. որ հոս ներկայ է, իր կոնդակին մէջ յորում ժողովոյս կանոնները կ'ուսայ՝ եթէ ինքը ժողովքը չլրացած մեռնի, ո՞չ ապաքէն կը ոչնչացունէ բոլոր այն բաները որ անցելոյն մէջ իրեն հակառակ կրնան ելլել՝ նաև եթէ իւր նախորդաց վճիռներէն յառաջ եկած ըլլան: Եւ արդարև եթէ Պիոս Թ. ՅԱԹՈՒՌՅ հրամայեց, իւր գերեզմանին խորէն ալ չէր կրնար հնաղանդութիւն պահանջել իրեն յաջորդ եկեղեցւոյ թագաւորներէն:

Անվերջանալի կ'ըլլայ, Յ. եղբարք, թէ ձեր աչաց դիմաց դնելու ըլլամ Պապերուն հակասութիւնները իրենց վարդապետութեանց մէջ: Ուրեմն եթէ դուք ներկայ Պապին անսխալութիւնը հրատարակելու ըլլաք, բռնի պիտի հարկադրիք ըսել, ուրիշ բան է որ անկարելի եղած բանն ալ ապացուցանել ջանաք, թէ՛ Պապերը հակասական եղած չեն, և կամ պէտք է քարոզէք թէ Հոգին Սուրբ ձեզի յայտնեց որ պապական անսխալութեան սկիզբն է 1871 էն: Պիտի կարենա՞ք այսչափ յանդգնիլ:

Ժողովուրդք թերեւս անտարբեր կ'ըլլան ատուած արանական ինդրոց նկատմամբ, որուն կա-

բերութիւնը ոչ կ'իմանան և ոչ ալ կ'զգան . բայց սկիզբները որչափ ալ անտարբեր ըլլան , հետեւանքը տեսնելէն ետքն ալ անտարբեր պիտի չըլլան : Մի խաբէք ուրեմն ինքզինքնիդ . եթէ հրատարակէք պապական անսխալութեան վարդապետութիւնը , Բողոքականք որ մեր հակառակորդներն են , այնչափ աւելի համարձակ յաղթութիւն պիտի կանգնեն , որչափ որ պատմութիւնը ունին ձեռուրնին մեզի հակառակ և իրենց նըպաստաւոր . մինչդեռ մենք անոնց դէմ ուրիշ բան չունինք բայց եթէ մեր ժխտումները : Ի՞նչ պիտի ըսենք իրենց եթէ հասարակութեան դիմացէն կարգաւ անցունեն Հռովմայ եպիսկոպոսները Ղուկասէն մինչև Պիոս Թ :

Ա՛հ , եթէ ամէնքը Պիոս Թ . ի պէս ըլլային , կատարելապէս կը յաղթանակէինք . բայց աւանդ , այդպէս չէ . — ԱՂԱՂԱԿՆԵՐ . ԼՌՈՒԹԻՒՆ , ԼՌՈՒԹԻՒՆ . ԲԱՒԱԿԱՆ Ե , ԲԱՒԱԿԱՆ :

Մի պտռաք , Տեարք իմ : Պատմութենէն վախնալը յաղթուիլ ըսել է . և միանգամայն եթէ Տիբերի բոլոր շուրերը պատմութեան վրայէն անցունէք , անոր մէկ էջն ալ չէք կրնար ջնջել : Թողուցէք որ խօսիմ , և նիւթոյս կարևորութիւնը որչափ որ կը ներէ համառօտ պիտի անցնիմ :

Վիգիլիոս պապը (538) Բելխարէն գնեց պապութիւնը , որ Յուստինիանոս կայսեր տեղափախ էր . իրաւ է որ խօսքին դրժելով բան մը չըվճարեց :

Կանոնակա՞ն է ուրեմն այս կերպով պապական

խոյրը ձեռք բերելը : Քաղկեդոնի երկրորդ ժողովքը բացարձակ դատապարտեր էր այդ գործը : Նոյն ժողովոյն կանոնաց միոյն մէջ կը կարդանք “ որ այն եպիսկոպոսը որ դրամով ձեռք կը ձգէ եպիսկոպոսութիւնը , զրկուի անկէ և էյնայ իւր աշտիճանէն : ”

Եւգինէոս Դ . պապը (1145) վիգիլիոսին հետևեցաւ : Ս . Բեռնարդոս , իւր գարուն պայծառաստղը , յանդիմանեց զպապը ըսելով իրեն . “ կրնանա՞ ցուցունել ինձի մէկ անձ մը Հռովմայ այս մեծ քաղքին մէջ , որ զքեզ իբրև պապ ընդունի՞ առանց ոսկի և արծաթ ընդունած ըլլալու : ”

Պապ մը , Յ . եղբարք իմ , որ դրամոյ սեղան կը բարձրացունէ տաճարին դռներուն քով , կրնայ այնպիսին ՚ի Հոգւոյն Սրբոյ ներշնչեալ ըլլալ : Կրնայ այնպիսին զեկեղեցին անսխալապէս ուսուցանելու իրաւունքն ունենալ :

Աղէկ գիտէք Ֆորմոզոյի պատմութիւնը , և չէք կրնար ըսել որ ես աւելի մեծցունելով կը պատմեմ : Ստեփանոս ԺԱ . անթաղ թողուց ասոր մարմինը , քահանայապետական զգեստները հագցուց և անոր մատուրները կտրեց որոնցմով օրհնութիւն կուտար , և Տիբեր գետը նետել տալով գիակը հրատարակեց որ անիկայ ստերգումն և անվաւեր էր : Ետքը ժողովուրդն ալ զինքը բանտարգեց , թունաւորեց ու խեղդեց , բայց տեսէք իրաց արդարադատ վախճանը . Ռոմանոս Ստեփանոսի յաջորդը և Յովհաննէս Ժ . նորէն Ֆորմոզոյի համբաւը վերականգնեցին :

Բայց պիտի ըսէք որ ասոնք առասպելք են ոչ թէ պատմութիւն : Առասպելք . գնացէք , Տեարք իմ , դնացէք վատիկանու գրատունը և պապութեան պատմարան Բլադինան կարդացէք և Բարոնիոսի տարեգիրքը : (Տարի 897)

Կան բաներ զորոնք ջնջել պիտի ուզենք Սրբոյ Աթոռոյն պատուոյն համար , բայց երբ խօսքը վարդապետութիւն մը հաստատելու վրայ է , որ մեծ հերձուած մը կրնայ գրգռել մեր մէջ , այն սերը զոր ունինք առ մայրն մեր կաթողիկէ Առաքելական և Հռովմէական սուրբ եկեղեցի , մեղի լըռութիւն կը պատուիրէ : — կը յաւելում :

Բարոնիոս ուսումնական քարտինալը պապական արքունեաց վրայ խօսելով , կ'ըսէ (շնորհեցէք ձեր ուշադրութիւնը , Յ . եղբարք իմ , այս խօսքերուն) “ որպիսի էր նոյն ժամանակը Հռովմէական եկեղեցւոյն կերպարանքը և ի՛նչպէս արհամարհ , երբ Հռովմայ մէջ միայն ամենակարող լկտի տիկնայք կը տիրապետէին : Անոնք էին որ կուտային , կը փոխէին և կը վերցունէին եպիսկոպոսութիւններ , և որ քսամնել ին է 'ի հաւատալ , իրենց հոմանիները , սուտ պապեր Ս . Պետրոսի գահուն վրայ կը բարձրանային : (Բարոնիոս տր . 912 :)

Բայց կ'ըսէք թէ անոնք ոչ թէ ճշմարիտ այլ սուտ պապեր էին . թող անանկ ըլլայ . բայց ան ատեն Յ . եղբարք իմ , եթէ յիսուն տարւոյ միջոց Հռովմայ աթոռը հակապապերը գրաւեցին , ի՛նչպէս պիտի գտնէք այն ժամանակ քահանայա-

պետական յաջորդութեան շարքը :

Եկեղեցին կրցաւ արդեօք մէկ ու կէս դար զրկել իր գլխէն և անգլուխ մնալ : Տեսէք ուրեմն . Այս հակապապերուն մեծ մասը պապութեան դասակարգութեան մէջ իրենց տեղն ունին . և պէտք էր որ անանկ եղած ըլլային ինչպէս որ Բարոնիոս զանոնք կ'ստորագրէ , որովհետև Գենեբրարդոս , պապերուն ամենամեծ շողմարարը , կը համարձակի ըսելու իր ժամանակագրութեանց մէջ (տր . 901 :)

“ Այս դարը դժբաղդ է , որովհետև գրեթէ 150 տարի չափ պապերը բոլորովին հեռացան իրենց նախորդաց առաքինութենէն , և աւելի ՈՒՐԱՅՈՂ կրնան համարուիլ քան թէ ԱՌԱՐԲԵԼԱԿԱՆ : ”

Կը հասկնամ , թէ ի՛նչպէս արդեօք անուանին Բարոնիոս Հռովմայ եպիսկոպոսաց այս գործերը պատմելու ատեն կարմրեցած պիտի ըլլայ : Դարձեալ ինքը խօսելով Յովհաննէս ԺԱ . ին վրայ , (931) որ Սերգիոս պապին և Մարովկիայի անհարազատն էր , կը գրէր այս խօսքերը իւր տարեգրոց մէջ : “ Սուրբ այսինքն Հռովմէական եկեղեցին պարտաւորեցաւ անարգաբար ոտնակոխ ըլլալ այնպիսի ճիւղէ մը : ” Յովհաննէս ԺԲ . (946) 18 տարեկան պապ ընտրուելով լկտի տիկնանց ազդեցութեամբ , իւր նախորդէն ոչ նուազ վատ լծարագոյն էր :

Կ'ողբամ , Յ . եղբարք իմ , զազրութեան այնչափ ճարակելուն վրայ . կը լռեմ Ալէքսանդր Զ . ին վրայ , հայր և միանդամայն տարփաւոր Լուք-

րեցիայի . չեմ' յիշեր զՅովհաննէս ԻԲ . (1316) որ կուրանայր հողւոյ անմահութիւնը , և որ ինկաւ յաթուոյ ֆոսդանցայի տիեզերական սուրբ ժողովքէն :

Ոմանք կը պնդեն թէ այս ժողովքը մասնական ժողովք մըն էր : Թող անանկ ըլլայ . բայց թէ որ նոյն ժողովքին ամեն հեղինակութիւնը մերժէք , տրամաբանական հետեւութենէ չփախչելու համար հարկ է անվտեր համարել Մարտինոս Ե . Ի ընտրութիւնը : (1417) Ի՞նչ բան պիտի ճշմարտէ այն ատեն պապական յաջորդութիւնը : Պիտի կարենա՞ք արդեօք անոր ծայրը գտնել :

Իսկ այն հերձուածոց վրայ , որոնք անպատիւ ըրին զեկեղեցի , չեմ' խօսիր : Այն դժբաղդ օրերը Հռովմայ աթոռը երկու և երբեմն երեք հակառակորդներ կը դրաւէին . որը ասոնցմէ ճշմարիտ պապն էր :

Համառօտելով խօսքս կը'սեմ , եթէ դուք այժմեան Հռովմայ եպիսկոպոսին անսխալութիւնը կը հրատարակէք , պիտի հարկադրիք բոլոր անոր նախորդաց անսխալութիւնն ալ հաստատել առանց մէկը դուրս ձգելու , բայց կրնա՞ք , քանի որ պատմութիւնը կեցած է որ կը հաստատէ արևու լուսոյն պայծառութեան պէս յայտնի , որ պապերը սխալեցան իրենց վարդապետութեանց մէջ : Կըրնա՞ք այդ բանն ընել , հանդուրժելով որ ազահ , ազգապիղծ , մարդասպան և սիմոնական պապերը թխուսի ֆրիստոսի փոխանորդ եղած ըլլան : Ո՞հ ,

Յ . եղբարք , այնպիսի եղեռան մը համբերելը

Յուդայէն աւելի մատնել է զՔրիստոս և իւր բըրեար տղամակոծել : (ԱՂԱՂԱԿ . 4ԱՐ , 4ԱՐ . ԲԵՄԵՆ . 1.ՈՒ՛՛ , ԿԱՐԿԷ՛ , ՀԵՐԵՏԻԿՈՍ .)

Յ . եղբարք , դուք կը կանչուըռտէք . այլ մի թէ աւելի վայելուչ չէ՞ր ըլլար որ իմ իրաւունքներս ու ապացոյցներս սուրբ սեղանոյն կշռոյն վըրայ կշռէիք : Հաւատացէք ինձ , պատմութիւնը չ'եղծանիր , անիկայ միշտ նոյն է և յաւիտեանս նոյն պիտի մնայ պապական անսխալութեան վարդապետութեանը դէմ ազդու կերպով բողոքելու համար : Թէ և անսխալութիւնը միակամ հաւանութեամբ հրատարակէք , քուէ մը պիտի պակսի՝ իմինս :

Ճշմարիտ հաւատացեալները , Տեարք իմ , աչքերնին մեր վրայ սևեռած են . մեզմէ կ'սպասեն այն անթիւ չարեաց դարմանը , որոնք անպատուութիւն են Եկեղեցւոյ . ՚ի դերե՞ւ պիտի հանենք անոնց յոյսը : Ինպիսի՞ պիտի ըլլայ առաջի Աստուծոյ մեր պատասխանատուութիւնը , եթէ ձեռքէ փախցունենք այս մեծ առիթը որ Աստուած տուաւ մեզ ճշմարիտ հաւատքը հաստատելու համար :

Խարսխենք զայն , եղբարք . սուրբ եռանդեամբ մը զլինուորինք . բուռն և վեհանձն զօրութիւն մը կազմենք . դառնանք առաքելական վարդապետութեանց , որովհետև անոնցմէ դուրս ուրիշ բան չենք գտներ բայց եթէ վրիպակ , խաւար և անհիմն աւանդութիւններ :

Դիտնանք ՚ի բարին գործածել մեր մտացոյցան

ու բանալարութիւնը, որպէս զի միակ անսխալ վարդապետներ ունենանք մեզի առաքեալներն ու մարդարէները, ըստ այն գեղեցիկ հարցման, թէ « Զինչ արարից զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից : » Եթէ ասանկ շարժինք, կրնանք ապահով ըլլալ մեր վարդապետութեանց հիմունքներուն հաստատութեանը վերայ :

Աստուածաշունչ Ս . Գրոց ամուր և անասան ժայռին վրայ հաստատուն և անշարժ կեցած, վրասահ գալենք ընդառաջ դարուս, և Պօղոս առաքելոյն պէս, ազատ մտածողներուն զիմացը այլ ինչ չուղենանք գիտնալ բայց եթէ զՅ . Քրիստոս և զնոյն ՚ի խաչ ելեալ . կը յաղթանակենք խաչին յիմարութեան քարոզութեամբը, ինչպէս Պօղոս յաղթանակեց Յունաստանի և Հռովմայ ճարտարախօսաց, և Հռովմէական եկեղեցին ալ իւր փառաւոր 89 ը ան տոնն կ'ունենայ : (ԲԱՐՁՐԱԶԱՅՆ ԱՂԱՂԱԿՆԵՐ . — ՎԱՐ ԱՌԷՔ, ԳՈՒՐՍ ՀԱՆՅԵՔԷ ԲՈՂՈՔԱԿԱՆԸ, ԿԱԼՎԻՆԱԿԱՆԸ, ԵԿԵՂԵՅՒՈՅ ՄԱՏՆԵՉԸ :)

Զեր աղազակները, Տեարք իմ, զիս չեն ահաբեկեր, եթէ զուրցուածքս տաք է, գլուխս պաղ է . ես ոչ լուտերական եմ, ոչ կալվինական, ոչ Պօղոսեան և ոչ Ապողոսեան, այլ Քրիստոսեան : (ԳԱՐՁԵԱԼ ԱՂԱՂԱԿՆԵՐ . — ԱՆԱԹԷՄԱ՝, ԱՆԱԹԷՄԱ՝ ՌՐԱՅԵԼՈՅՆ :)

Անաթէմա՛, Տեարք իմ, անաթէմա՛ . դուք ազէկ պիտէք որ ձեր բողոքները ինձի դէմ չեն, այլ սրբոց առաքելոց դէմ, որոց հովանաւորութեան ներքեւ կը փափաքէի որ այս ժողովքս դնէր զեկե-


ղեցին : Ա՛հ, եթէ իրենց պատանքներովն ելլէին իրենց գերեզմաններէն, իմ լէզուէս տարբեր լեզուաւ մը արդեօք պիտի խօսէին ձեզի :

Ի՞նչ պիտի ըսէք իրենց երբ ձեզի ըսելու ըլլան, որ պապութիւնը չեղեցաւ Աստուծոյ որդւոյն Աւետարանէն, զոր իրենք այնքան եռանդեամբ քարոզեցին և իրենց արիական արեամբն ալ հաստատեցին : Պիտի համարձակի՞ք իրենց ըսելու, թէ մենք ձեր վարդապետութիւններէն աւելի մեր պապերուն, մեր Բեղլարմիսոններուն և մեր Իգնատիոս Լոյոլայներուն վարդապետութիւնքը կը վերադասենք : Ո՛չ, ոչ, հազար անգամ ո՛չ . բաւական է որ ականջնիդ խրացուցած չ'ըլլաք լսելու, աչքերնիդ գոցած չ'ըլլաք տեսնելու և մտքերնիդ թանձրացուցած չ'ըլլաք իմանալու :


Ա՛հ, եթէ այն որ կը թագաւորէ յերկինս, ուղենայ ծանրացունել իւր աջը մեր վրայ, ինչպէս ծանրացուց փարաւսնի վրայ, պէտք չունենար կարիպալտի զօրաց թոյլ տալու որ յաւիտենական քաղքէն զմեզ վռնան . ուրիշ բան պէտք չէ ընէ բայց եթէ թողու որ զՊիոս Թ . աստուած մը ընենք, ինչպէս որ Ս . Կոյսն ըրինք աստուածուհի մը :

Կեցէք, կեցէք տակաւին, Յ . եղբարք իմ, սյդ գժնդակ և ծաղրելի դահավիժին բերանը ուր որ կեցեր էք : Փրկեցէք զեկեղեցին ՚ի նաւակոծութենէ որ կ'սպառնայ . միայն Ս . Գրոց հարցունելով հաւատոյ կանոնները, զոր պարտիմք

խոստովանել և հաւատալ : Ասացի : Տէր օգնեսցէ
ինձ :



Այս ետքի խօսքերը չափազանց դժկամակու-
թեամբ ընդունուեցան : Ամենայն հարք ժողովոյն
ոտք ելան . շատերը սրահէն դուրս ելան . բաւա-
կան բազմութիւն մը իտալացի , ամերիկացի , գեր-
մանացի և պղտիկ խումբ մ'ալ գաղղիացի և անգ-
ղիացի եպիսկոպոսաց ժողովեցան քաջ ճառախօսին
չորս կողմը , եղբայրաբար ձեռքը սեղմեցին և իրեն
յայտնեցին որ համամիտ են իւր մտածութեանցը :
Եթէ այս բանախօսութիւնը ժՁ . դարուն մէջ աե-
ղի ունեցած ըլլար , քաջ եպիսկոպոսին խարոյկի
վրայ մեռնելու փառքը կրնալ պատճառել . այս
դարուս մէջ Պիոս Թ . ին և բոլոր ժողովրդոց աը-
դիտութեամբը զեղծանիլ ուղղներուն զայրոյթը
դրդուեց : Խեղճ կոյրեր . “ իրենց փորած խորխո-
րատին մէջ իրենք պիտի ինկնան : ” Սղմ . Է . 15 :



ՀՀ Ազգային գրադարան



NL0341034

